

Մայր Աթոռ Ս. Էջմիածին
Տեղեկատվական Համակարգ
Հեռ.: (374 10) 517 128
Հեռախոս: (374 10) 517 301
Էլ-փոստ: holysee@etchmiadzin.am
Տնօրեն՝ Տ. Վահրամ քհն. Մելիքյան

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Օգոստոսի 15, 2008թ.

Նոր հրատարակություն. «Հայ Վանորայք»

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչական բաժինը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնությամբ լույս է ընծայել 19-րդ դարի վերջի և 20-ի սկզբների մտավորական հոգևորական Տ. Տրդատ եպիսկոպոս Պալյանի «Հայ Վանորայք» աշխատությունը, որը հրատարակության է պատրաստել Կարինե Ավետյանը:

Գրքում զետեղված են նաև հայազգի հայտնի լուսանկարիչ Հրայր Բազեի մի քանի լուսանկարները: Գիրքը հրատարակվել է մեկենասությամբ «Արմեն և Նունե Սարգսյաններ» հիմնադրամի:

Տրդատ եպիսկոպոսը «Հայ վանորայք» հողվածաշարի պատրաստությունը սկսել է 1883 թ. և շարունակել մինչև գրքի հրատարակության նախօրյակը: Վանքերի շատ նկարագրությունների համար ինքն անձամբ է շրջել և նյութեր հավաքել իր ուսումնասիրության համար: Ականատեսի այս նկարագրություններն այդ վանքերի՝ իր ժամանակի կացության և յուրահատկությունների արձանագրումն են, դրանով էլ ստույգ վավերագրի արժեք ունեն:

Սրբազան Հոր այս աշխատանքը Կեսարիայի և կեսարահայոց, Մալաթիայի, Եվդոկիայի հայոց պատմության առաջնակարգ և վավերական ակզբնաղբյուր է, միաժամանակ, ձեռագրական և վիճագրական աղբյուրների տվյալների վրա հիմնված համակողմանի ուսումնասիրությունն է:

* * *

Հրատարակչական բաժինը «Հայ Եկեղեցու Հայրեր» շարքից արևելահայերեն թարգմանությամբ տպագրել է Ս. Գավիթ Անհաղթի ներբողները և Մամբրե Վերծանողի ճառերը:

Գրաբարից թարգմանությունը կատարել է Մարթա Արաբյանը: Գիրքը հրատարակվել է մեկենասությամբ «Սարգիս Գաբրիելյան» հիմնադրամի: